

ԿԱՐԳ

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻ ԵՎ ԽՈՏՀԱՐՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են Ապարան համայնքի վարչական տարածքում սեփականություն հանդիսացող հողերի վրա գտնվող արոտավայրերի կառավարման և արդյունավետ օգտագործման պայմանները:
2. Արոտային շրջանի տևողությունը՝
 - խոշոր եղջերավոր կենդանիների համար՝ 150-170 օր,
 - մանր եղջերավոր կենդանիների համար՝ 180-210 օր:
3. Միևնույն արոտատարածքում ամբողջական բոլորապտույտով արածացումների թիվն ամբողջ արոտային շրջանում սահմանվում է 5-6 անգամ:
4. Արոտային բեռնվածության որոշման նպատակով մեկ պայմանական կենդանու գլխաքանակին տարբեր գյուղ. կենդանիները հավասարեցվում են հետևյալ գործակիցներով՝
 - 1) կով, արտադրող ցուլ – 1,0
 - 2) խոշոր եղջերավոր կենդանիների սեռահասակային այլ խմբեր – 0,66
 - 3) մանր եղջերավոր կենդանի – 0, 1
5. Արածեցման արդյունավետ եղանակը հերթափոխային արածեցումն է, որի կիրառման համար Արոտատարածքը պետք է բաժանել արոտավանդակների, որոնց մեծությունը 100 պայմանական Անասնագլխաքանակ ընդգրկող նախրի համար կազմում է՝ 10-20 հա:
6. Մեկ պայմանական գլխաքանակի համար ամբողջ արոտային շրջանում անհրաժեշտ արոտատարածքը կազմում է 1,0 հա
7. Ջրելատեղերի հեռավորությունն արոտավայրից պետք է լինի հետևյալ հեռավորության վրա՝
 - 1) կթու կովերի համար՝ առնվազն 1 կմ
 - 2) բսվող խոշոր և մանր եղջերավոր կենդանիների համար՝ առնվազն 1,5 կմ
8. Արոտավայրերում կենդանիների գիշերավայրը պետք է լինի ջրելատեղերից 300-500 մ հեռավորության վրա:
9. Բնական խոտհարքներն օգտագործման են տրամադրվում խոտինձի նպատակով:

Աշխատակազմի քարտուղար՝



Գ.Երեմյան